

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 27 Օգոստոս 2017

**Գ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԻՐԱՓՈՒՄԱՆ
/ԹԻԻ 21**

SUNDAY, August 27, 2017

**3rd SUNDAY OF THE FEAST OF
ASSUMPTION – N0/21**

TODAY'S BIBLE READINGS

2 Corinthians 2.12-3.3 | Mark 6.30-44 |



Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՉՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,
Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjan

Choirmaster: Miss Lori Antounian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 2.12-3.3

12Ուրեմն երբ հասայ Տրովադա՝ Քրիստոսի աւետարանը քարոզելու, թեպէտ Տերը դուռ մը բացած էր ինծի, **13**անդորրութիւն չունեցայ հոգիիս մէջ, որովհետեւ հոն չգտայ եղբայրս՝ Տիտոսը. հապա հրաժեշտ առնելով անոնցմէ՝ մեկնեցայ Մակեդոնիա:

14Շնորհակալութի՛ն Աստուծոյ, որ ամէն ատեն մեզի յաղթութիւն կը պատճառէ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով կը յայտնաբերէ ամէն տեղ: **15**Որովհետեւ մենք՝ Աստուծոյ համար՝ Քրիստոսի անոյշ հոտն ենք, թէ՛ փրկուածներուն եւ թէ՛ կորսուողներուն մէջ: **16**Ոմանց՝ մահուան հոտ դէպի մահ, ոմանց ալ՝ կեանքի հոտ դէպի կեանք: Եւ ո՛վ ընդունակ է ընելու այս բաները: **17**Քանի որ մենք շատերուն պէս չենք, որոնք կը խարդախեն Աստուծոյ խօսքը. հապա անկեղծութեա՛մք, Աստուծմէ դրկուած եւ Աստուծոյ առջեւ կը խօսինք՝ Քրիստոսով

1Սկսի՛նք դարձեալ մենք մեզ յանձնարարել. կամ թէ՛ ոմանց պէս՝ պե՛տք են մեզի յանձնարարական նամակներ ձեզի, կամ յանձնարարութիւն ձեզմէ: **2**Դ՛ո՛ւք էք մեր նամակը՝ մեր սիրտերուն մէջ գրուած, ճանչցուած ու կարդացուած բոլոր մարդոցմէն. **3**բացայայտ ըլլալով որ դուք Քրիստոսի նամակն էք՝ մեր սպասարկութեամբ, ո՛չ թէ մելանով գրուած, հապա՝ ապրող Աստուծոյ Յոգիով. ո՛չ թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա՝ սիրտին մարմնեղէն տախտակներուն վրայ:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 6.30-44

30Առաքեալները հաւաքուեցան Յիսուսի քով ու պատմեցին անոր ամէն բան, թէ՛ ինչ որ ըրին, թէ՛ ինչ որ սորվեցուցին: **31**Ան ալ ըսաւ անոնց. «Դ՛ո՛ւք առանձին եկե՛ք ամառի տեղ մը, եւ հանգչեցե՛ք քիչ մը». քանի որ շատեր կու գային ու կ'երթային, եւ հաց ուտելու իսկ ժամանակ չէին ձգեր: **32**Ուստի նաևով ամառի տեղ մը գացին՝ առանձին:

33 Բազմութիւնը տեսաւ զանոնք՝ որ կ'երթային: Շատեր ճանչցան զայն, ու ոտքով՝ բոլոր քաղաքներէն հոն վազեցին, եւ անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քով համախմբուեցան: **34** Յիսուս, երբ դուրս ելաւ, մեծ բազմութիւն մը տեսնելով՝ գթաց անոնց վրայ, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին. ու շատ բաներ սորվեցուց անոնց: **35** Երբ շատ ժամեր անցան, իր աշակերտները եկան իրեն եւ ըսին. «Յոս ամայի տեղ մըն է, ու ժամանակը արդէն շատ ուշ է: **36** Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ արտերն ու գիւղերը եւ իրենց հաց գնեն, որովհետեւ ոչինչ ունին ուտելու»: **37** Բայց ինք պատասխանեց անոնց. «Դո՛ւք տուէք ատոնց՝ որ ուտեն»: Ըսին իրեն. «Երթանք գնե՛նք երկու հարիւր դահեկանի հաց ու տա՛նք ատոնց՝ որ ուտեն»: **38** Ըսաւ անոնց. «Քանի՞ նկանակ ունիք. գացէ՛ք՝ նայեցէ՛ք»: Երբ գիտցան՝ ըսին. «Յինգ, եւ երկու ձուկ»: **39** Յրամայեց անոնց, որ բոլորը կանաչ խոտին վրայ՝ խումբ-խումբ նստեցնեն. **40** ու նստան՝ հարիւրական եւ յիսունական շարքերով: **41** Յինգ նկանակներն ու երկու ձուկերը առաւ, դէպի երկինք նայելով՝ օրհնեց, մանրեց նկանակները եւ տուաւ իր աշակերտներուն, որպէսզի հրամցնեն անոնց. երկու ձուկերն ալ բաժնեց բոլորին: **42** Բոլորը կերան, կշտացան, **43** եւ վերցնելով բեկորներն ու ձուկերը՝ տասներկու կողով լեցուցին: **44** Այդ նկանակներէն ուտողները՝ հինգ հազարի չափ այր մարդիկ էին: **45** Իսկոյն իր աշակերտները հարկադրեց՝ որ նաւ մտնեն, ու իրմէ առաջ անցնին միւս եզերքը՝ Բեթսայիդա, մինչ ինք կ'արձակէր բազմութիւնը: **46** Եւ անոնցմէ հրաժեշտ առնելէ ետք՝ լեռը գնաց ադօթելու;

2 Corinthians 2.12-3.3

12 Furthermore, when I came to Troas to preach Christ's gospel, and a door was opened unto me of the Lord, **13** I had no rest in my spirit, because I found not Titus my brother: but taking my leave of them, I went from thence into Macedonia.

14 Now thanks be unto God, which always causeth us to triumph in Christ, and maketh manifest the savour of his knowledge by us in every place.

15 For we are unto God a sweet savour of Christ, in them that are saved, and in them that perish: **16** To the one we are the savour of death unto death; and to the other the savour of life unto life. And who is sufficient for these things?

17 For we are not as many, which corrupt the word of God: but as of sincerity, but as of God, in the sight of God speak we in Christ.

1 Do we begin again to commend ourselves? or need we, as some others, epistles of commendation to you, or letters of commendation from you? **2** Ye are our epistle written in our hearts, known and read of all men: **3** Forasmuch as ye are manifestly declared to be the epistle of Christ ministered by us, written not with ink, but with the Spirit of the living God; not in tables of stone, but in fleshy tables of the heart.

Mark 6.30-44

30 And the apostles gathered themselves together unto Jesus, and told him all things, both what they had done, and what they had taught. **31** And he said unto them, Come ye yourselves apart into a desert place, and rest a while: for there were many coming and going, and they had no leisure so much as to eat.

32 And they departed into a desert place by ship privately. **33** And the people saw them departing, and many knew him, and ran afoot thither out of all cities, and outwent them, and came together unto him. **34** And Jesus, when he came out, saw much people, and was moved with compassion toward them, because they were as sheep not having a shepherd: and he began to teach them many things.

35 And when the day was now far spent, his disciples came unto him, and said, This is a desert place, and now the time is far passed: **36** Send them away, that they may go into the country round about, and into the villages, and buy themselves bread: for they have nothing to eat. **37** He answered and said unto them, Give ye them to eat. And they say unto him, Shall we go and buy two hundred pennyworth of bread, and give them to eat? **38** He saith unto them, How many loaves have ye? go and see. And when they knew, they say, Five, and two fishes. **39** And he commanded them to make all sit down by companies upon the green grass. **40** And they sat down in ranks, by hundreds, and by fifties.

41 And when he had taken the five loaves and the two fishes, he looked up to heaven, and blessed, and brake the loaves, and gave them to his disciples to set before them; and the two fishes divided he among them all. **42** And they did all eat, and were filled. **43** And they took up twelve baskets full of the fragments, and of the fishes. **44** And they that did eat of the loaves were about five thousand men.

«Տեսաւ մեծ բազմութիւնը, գթաց անոնց վրայ»:



Տեսաւ բառը ցոյց կու տայ թէ Յիսուս տեսնող աչք ունի: Ան տեսաւ մարդոց հոգեւոր ծարաւը: Տեսաւ սիրոյ կարիքը ունեցող անոնց սիրտերը: տեսաւ բուժուելու կարօտ ունեցող հոգիները: Սիրելի՛ հաւատացեալներ , Յիսուս մե՛զ ալ կը տեսնէ: Կը տեսնէ խռոված ու խաղաղութեան կարիքը ունեցող մեր միտքերը: Կը տեսնէ կտորած եւ քաջալերանքի կարօտ մեր հոգիները:

«Տեսաւ մեծ բազմութիւնը, գթաց անոնց վրայ»: Յիսուս ոչ միայն տեսաւ զինք փնտռող եւ իրեն սպասող բազմութիւնը, այլեւ «գթաց անոնց վրայ»: Մեր Տէրը ո՛չ միայն տեսնող աչք ունի, այլեւ՝ գթացող սիրտ: Ան գթաց՝ որովհետեւ մարդիկ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին (Մր 6.34):

<<Գթաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց>> Գթալը Յիսուսի համար միայն խօսք չէր: Ան գործնապէս արտայայտեց իր սերը՝ բուժելով հիւանդները եւ կերակրելով անօթիները:

«Հիւանդները բժշկեց»: Յատկանշական է որ Յիսուս ժողովուրդը հացով ու ձուկով կերակրելէ առաջ՝ նախ անոնց հիւանդները բժշկեց: Ինչո՞ւ համար բժշկեց հիւանդները:

Ա-«Յիսուս բուժեց մարդիկը եւ յետո՛յ միայն հաց բաշխեց անոնց, սորվեցնելու համար մեզի, որ իսկական Հացին՝ Սուրբ Հաղորդութեան մօտենալէ առաջ, նախ պետք է բուժենք մեր անձերը ապաշխարութեան եւ խոստովանութեան միջոցաւ»:

Բ- Մարմնապէս հիւանդ եղողները ուտելիքէն առաջ նախ բուժումի կարիքը ունեն: Անոնք չէին կրնար գետին նստիլ հանգիստ կերպով եւ հաց ուտել կամ Աստուծոյ խօսքը լսել, եթէ երբեք մարմնական պակասութիւն ունեն: Յիսուս զանոնք հանգստաւետ պայմաններու մէջ դնելէ ետք, միայն կերակրեց եւ Աստուծոյ խօսքը փոխանցեց:

Գ-Յիսուս տառապողին տառապանքը բուժեց, անկէ ետք միայն կերակրեց զանոնք, սորվեցնելու համար մեզի թէ երբ մարդիկ ցաւի մէջ են, զրկանքի կ'ենթարկուին դժուար թէ կարենան ականջ տալ Աստուծոյ խօսքին:

Եւ Յիսուս ըսաւ «Յո՛ւս բերեք ատոնք» Յիսուս հրամայեց իր աշակերտներուն իրեն յանձնել ինչ որ ունին իրենց տրամադրութեան ներքեւ եւ աշակերտները յանձնեցին: Տերը իրեն յանձնուածը օրհնեց, առատացուց եւ անով կերակրեց մեծ բազմութիւն մը:

Սիրելի հաւատացեալներ՝


Եթէ աշակերտներուն նման, մենք եւս մեր քով եղած « քիչ»ը յանձնենք Տիրոջ, դնենք իր ամենակալ ձեռքերուն մէջ, վստահ եղէք որ Տերը պիտի առնէ մեր

« քիչ»ը, օրհնէ զայն, եւ շատերու համար օգնութիւն եւ օրհնութիւն պիտի դառնանք: Ամէն:

Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան



Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան իր այցելութեան ընթացքին երեցներու տան մէջ:



Տէր Եղիա կը հանդիպի մեր Եկեղեցոյ
վաստակաւոր անդամուհի եւ
«Էջմիածնասէր Մայրերու
Յանձնախումբի» երկարամեայ
Ատենապետուհի՝ Տիկին Անահիտ
Էվրէնսէլի հետ:

Տիկին Անահիտ Էվրէնսէլի Եկեղեցասէր
ու նուիրեալ ծառայութիւնը միշտ
պարծանքը կը հանդիսայ մեր Եկեղեցոյ
առաքելութեան, որուն համար իրենց

երախտապարտութիւնը կը յայտնեն Հովին ու Ծիական Խորհուրդը:

What does the Bible say about confession and forgiveness?

When you become a believer, a tremendous change in your relationship with God happens.

- God adopts you as his child: “See what kind of love the Father has given to us, that we should be called children of God”, 1 John 3:1.
- You used to be darkness, but now you are light: “for at one time you were darkness, but now you are light in the Lord”, Ephesians 5:18.
- You used to be spiritually dead, but God made you alive. “God... even when we were dead in our trespasses, made us alive together with Christ”, Ephesians 2:4,5.
- You have become a member of the church, which is the body of Christ: “Now you are the body of Christ”, 1 Corinthians 12:27.
- You have received forgiveness for all your sins: “everyone who believes in him receives forgiveness of sins through his name”, Acts 10:43.
- You are God’s possession with a special position: “But you are a chosen race, a royal priesthood, a holy nation, a people for his own possession”, 1 Peter 2:9.
- You have an eternally secure position as a sheep in Jesus’ care: “I give them eternal life, and they will never perish, and no one will snatch them out of my hand”, John 10:28.


Does all of this change when we sin? No, it still remains true. Does it change when we do not confess that sin before we die? No, it still remains true. These are all unconditional promises for God’s children, and descriptions of their position in God’s sight.



At the same time, the Bible calls upon us as believers to confess our sins. “If we confess our sins, he is faithful and just to forgive us our sins and to cleanse us from all unrighteousness”, 1 John 1:9. When we read this in the light of all the verses above, it is clear that it cannot mean that we have lost our salvation as long as we have not confessed our sins.

Our position as a child of God has not changed. But the relationship has changed. A child can do something to make his parents angry or sad. But it does not mean he is not their child anymore. Yet he needs to confess and to better his life to repair his relationship with his parents. The same is true for God’s children. God’s love for you has not changed. You have not lost your salvation through sinning. But to be close to God again, to restore the relationship, you need to confess your sin and receive his forgiveness.

So, don’t be afraid you will go to hell if you have un-confessed sins when you die. But don’t wait to confess them either. Confessing your sins and receiving God’s forgiveness will help you to walk joyfully with the Lord every day of your life.



The Multiplication of the Loaves and Fish - John 6:1-15

After went this Jesus to the other side of the Sea of Galilee, also called the Sea of Tiberias. A large crowd kept following him, because they saw the signs that he was



doing for the sick. Jesus went up the mountain and sat down there with his disciples. Now the Passover, the festival of the Jews, was near. When he looked up and saw a large crowd coming toward him, Jesus said to Philip, 'Where are we to buy bread for these people to eat?' He said this to test him, for he himself knew what he was going to do. Philip answered him, 'Six months' wages would not buy enough bread for each of them to get a little.' One of his disciples, Andrew, Simon Peter's brother, said to him, 'There is a boy here who has five barley loaves and two fish. But what are they among so many people?' Jesus said, 'Make the people sit down.' Now there was a great deal of grass in the place; so, they sat down, about five thousand in all. Then Jesus took the loaves, and when he had given thanks, he distributed them to those who were seated; so also, the fish, as much as they wanted. When they were satisfied, he told his disciples, 'Gather up the fragments left over, so that nothing may be lost.' So, they gathered them up, and from the fragments of the five barley loaves, left by those who had eaten, they filled twelve baskets. When the people saw the sign that he had done, they began to say, 'This is indeed the prophet who is to come into the world.' When Jesus realised that they were about to come and take him by force to make him king, he withdrew again to the mountain by himself.

Ս. Մարիամ Աստուածածին. սրբաբարոյ վառքի օրինակ իւրաքանչիւրիս համար



Սուրբ Գիրքը կ'ըսէ, թէ Աստուած սուրբերու մէջ կը բնակի՝ ոչ միայն սուրբ վայրերու մէջ, այլ մաքուր սրտերուն եւ մաքուր մտքերուն մէջ: Սրբութեան այս չափանիշը ոչ միայն Աստուծոյ գոյութիւնը փաստող հաւատքին մէջ է, կամ եկեղեցի պարբերաբար յաճախող վառքագիծ ունեցողին, այլ կենդանի պայքարի. պայքար, որ մեր կեանքին իմաստ կու տայ եւ կ'առաջնորդէ ոչ թէ քանդելու, այլ կառուցելու: Պայքար, որուն ընթացքին մենք պարզապէս կը զգանք, որ ոչ միայն կ'ապրինք, այլ մեր էութեան, մեր ամբողջ կազմութեան բոլոր բջիջներով կ'զգանք մեր կենդանութիւնը: Աստուածամայրը կեանքի աղբիւր եւ կեանքի օրինակ է իւրաքանչիւրիս համար:

Այս ամենէն բացի, Աստուածամայրը մեզ համար նաեւ բարեխօս է: Մենք այսօր կը խնդրենք Աստուածամօր բարեխօսութիւնը մեզի, մեր ընտանիքներուն եւ մեր զաւակներուն, մեր Հայրենիքին եւ մեր Եկեղեցւոյ համար եւ կը հաւատանք, որ Տիրամայրը ինչ որ խնդրէ, Աստուած անպայման կը կատարէ: Սակայն այն հաւատքը, որ մեզի կը բերէ, կը կանգնեցնէ Աստուածամօր բարեխօսութեան խորհուրդին առաջ, պարզ իրականութիւն չէ, կամ միայն փաստելը չէ, որ մենք գիտենք Աստուծոյ գոյութեան մասին: Այդ հաւատքը այն կենդանի պայքարն է, որ մեզ կ'առաջնորդէ դէպի Աստուած, այն կենդանի պայքարն է, որ կ'անցնի աղօթքով, ապաշխարութեամբ եւ զղջումով: Հետեւաբար պէտք չէ սպասել, որ երբեւէ սուրբերը, ի դէմս Աստուածամօր, կը խղճան ու կը բարեխօսին մեզի համար: Պէտք է փորձել դրախտի մեր պատկերացումներն իրականութիւն դառննել այստեղ՝ այս երկրի վրայ եւ մեր կեանքին մէջ: Այսինքն՝ շարժուիլ դէպի Երկինք ձգտելով:

Երկիրը, ուր մենք կ'ապրինք, հողը, որուն վրայ կանգնած ենք, պիտի դիտենք ոչ թէ որպէս կուտակելու, հարստանալու միջոց, այլ որպէս դէպի Աստուած ձգտելու եւ դէպի Աստուած բարձրանալու հենարան:




Խոստովանութիւն եւ Աղօթք ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Մեղքերու խոստովանութեամբ պետք է պատրաստենք մեր սիրտերը՝ դառնալու Անմեղի բնակարանը: Չխոստովանուած մեղքերը կ'արգիլեն, որ Քրիստոս մուտք գործէ մեր հոգիներէն ներս: «Եթէ խոստովանինք մեր մեղքերը, վատահ եղէք, որ Արդար Աստուած պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն»: (Ա Յովհ. 1:9)

Շատ ողորմելի ենք, եթէ խոստովանուեցեամբ մեղքերու թողութիւն ստանալու ամիթը ունենալով, մենք շարունակենք մեր մեղքերու բեռը մեր ուսերուն վրայ պահել: Խոստովանիլը՝ մեղքերու բեռը մէկ կողմ թողելն է:

Բարսեղ Մաշկեւորցին, խօսելով խոստովանութեան մասին, կ'ըսէ. «Ինչպէս որ պղնձագործը ժանգոտած անօթը քուրայէն անցնելով՝ մուրճի հարուածներով այդ կը փայլեցէ, նոյնպէս եւ դուն մեղքերով ժանգոտած հոգիդ խոստովանութեան քուրային մէջ նետէ, եւ ապա բարձրէն իջեցուր մուրճը, այսինքն՝ մեղադրանքի եւ յանդիմանական խօսքերը, որպէսզի հոգիդ վերստին պայծառանայ»: Բարսեղը կ'ուզէ ըսել, որ քրիստոնէայ մարդը խոստովանութեան պահուն ինքնամեղադրութեան եւ ինքնայանդիմանանքի ճամբան պետք է ընտրէ, որպէսզի կարողանայ մեղքի ժանգը մաքրել իր հոգիէն: Ինչպէս, երբ ծառի ճիւղերը կը կտրուին, ծառը իր զօրութիւնը կը վերագտնէ, այնպէս ալ, երբ քրիստոնէայ մարդը կը խոստովանի իր մեղքերը՝ Սուրբ Հաղորդութեան միջոցով իր զօրութիւնն ու հոգեւոր պայծառութիւնը կը վերագտնէ:



Սուրբ Հաղորդութիւնը դեղ է մեր հոգիին եւ մարմնին համար: Այս դեղը մեզի օգտակար կ'ըլլայ միայն ա՛յն ժամանակ, երբ խոստովանինք մեր մեղքերը: Ինչպէս, եթէ հիւանդ մարդը չխոստովանի եւ չհրապարակէ իր հիւանդութիւնը՝ դեղ չստանար եւ չի դարմանուիր, այնպէս ալ ան, ով Սուրբ Հաղորդութեան կը մօտենայ առանց խոստովանելու իր մեղքերը՝ թողութիւն եւ հոգիի խաղաղութիւն չի գտներ:

Սիրելի՛ հաւատացեալ, թոյլ չտանք, որ Սատանան կամ մեր նման մարդիկ ամչցնեն մեզի եւ հեռու պահեն խոստովանութենէն: 13-րդ դարու հեղինակ Յովհաննէս Երզնկացին կ'ըսէ. «Քահանայի ներկայութեամբ ձեր ունեցած փոքր վախով ու ամօթով կը փրկուիք այն մեծ ամօթէն, որ տիեզերական ահեղ հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ... Երբ մարդոց բոլոր ծածուկ գործերը պիտի յայտնուին: Այդ վախը եւ ամօթը շատ ակելի սաստիկ է, երբ երկինքն ու երկիրը միասնաբար պիտի գան, եւ ոչ ոք չպիտի կարողանայ ծածկել իր մեղքերը, այլ պիտի յանդիմանուի, ամչնայ ու դողայ մեծ հրապարակին վրայ: Ամօթէն յետոյ գեհե՛նի հուրին եւ յաւիտենական տանջանքին պիտի մատնուի Սատանային հետ, ուր աչքերը պիտի լան, եւ ատամները՝ կրճտան»:

Աղօթք

Եթէ խոստովանութիւնը մեր մեղքերուն ճիւղերը կտրելն է, ապա աղօթքը նոր ճիւղեր պատուաստելն է: Ճիւղեր, որոնց վրայ հաւատքի եւ հաւատարմութեան, սիրոյ եւ սրբութեան պտուղները միասնաբար կը հասունանան: Չաղօթող մարդը նման է անպտուղ ծառի, որուն ո՛չ թռչունները կը մօտենան, ո՛չ մարդիկ, եւ ո՛չ ալ Աստուած՝ Սուրբ Հաղորդութեամբ: Աղօթքը մեր սիրտին դուռն ու ցանկապատն է: Ինչպէս դուռ եւ ցանկապատ չունեցող պարտեզը ամեն տեսակ կենդանի կրնայ մտնել եւ ակերել, այնպէս ալ աղօթքը իբրեւ դուռ եւ ցանկապատ չունեցող սիրտ, յարձակման կ'ենթարկուի չար դէւերու եւ ոգիներու կողմէ: Նման սիրտը չի կրնար պարուրուիլ Քրիստոսի մարմինով եւ արիւնով:

Աղօթքով պէտք է մաքրենք մեղքի թարախը մեր հոգիներէն: Մեզմէ ո՛վ չի խորշիր թարախոտած ձեռքով կերակուր ուտելէ: Եթէ երբէք թարախոտած ձեռքով ճաշ չենք ուտեր, հապա որքա՞ն ակելի զգոյշ պէտք է ըլլանք՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը մեղքերով թարախոտած մեր մարմիններուն մէջ առնելու:

Ինչպէս խի՛ստ պատիժի կ'արժանանայ ան, ով փշրուած ու կոտորուած գահ կու տայ իր երկրի թագաւորին եւ անկէ կը խնդրէ որ անոր վրայ բազմի, այնպէս ալ մեծապէս պիտի պատժուին բոլոր անոնք, որոնք Սուրբ Հաղորդութեամբ Քրիստոսին հրաւիրեն բազմելու մեղքով փշրուած ու կոտորուած իրենց սիրտի գահին վրայ: Աստուծոյ կողմէ եւ Աստուծոյ՛ համար

մեր սրտերուն դրուած այդ գահը միայն աղօթքով կրնայ նորոգուիլ: Այդ նորոգութեան կը յաջորդէ Սուրբ Հոգիին ներգործութիւնը, երբ կը ճաշակենք Քրիստոսի մարմնէն եւ արիւնէն: Ուրեմն, աղօթե՛նք արարչագործութեան եւ արարածներու Նորոգիչին եւ Վերանորոգիչին՝ Աստուծոյ մարմինին եւ արեան մերձենալէն առաջ:

Աղօթե՛նք, որպէսզի մեր սիրտերը վերածուին սկիհի՝ պատրաստ իր մէջ առնելու Տէր Յիսուսի մարմինն ու արիւնը: Աղօթե՛նք, որպէսզի կաւէ զանգուածներս չայրուինք Աստուծոյ որդիին հրանման մարմինին եւ արեան առջեւ: Աղօթե՛նք, որպէսզի մեր հոգիները դո՛ւրս շարտեն իրենց ներսէն մահառիթ մեղքը եւ միանան կենսատու Նշխարին եւ առատահոս սրբարար Գինիին:

Աղօթե՛նք, որպէսզի կասեցնենք չար խորհուրդներու հոսքը մեր կեանքէն ներս եւ Սուրբ Հաղորդութեամբ Աստուծոյ բազմապիսի բարերարութիւններով լեցուն գետի ուղղութիւնը ուղղենք դէպի մեր կեանքերը: Չաղօթող մարդը չի՛ բարերարուիր մեր Տիրոջ բարեգործ եւ բարեբաշխ մարմինէն եւ արիւնէն: Սուրբ Հաղորդութիւնը կը կենսագործէ, երբ կ'աղօթենք կեանքի Արարիչին:

Եկե՛ք ինքնաքննութեան, ծոմապահութեան, խոստովանութեան եւ աղօթքի ճամբով մաքրենք մեր սրտերէն եւ հոգիներէն մեղքի տիղմը, որպէսզի փառքի թագաւորը՝ Քրիստոս, իր յաղթական մուտքը գործէ մեր կեանքէն ներս, Սուրբ Հաղորդութեան միջոցով:



Կեանք, Յոյս եւ Ճշմարտութիւն

Յիսուսի Մկրտութիւնը





Սիրելի հաւատացեալներ,

Անոնք որոնք կը փափաքին, որ
Հոգեւոր հովիւը այցելութիւն կատարէ
իրենց հիւանդ ընտանեկան
պարագաներուն կամ հարագատներուն,
Եկեղեցոյ Հովիւը՝

Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստ է
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու
ձեր փափաքին:

Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ
Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066



FAMILY PRAYER

*God made us a family
We need one another
We love one another
We forgive one another
We work together
We play together
We worship together
Together we use God's word
Together we grow in Christ
Together we love all men
Together we serve our God
Together we hope for Heaven
These are our hopes and ideals
Help us to attain them,
O God, Through Jesus Christ
our Lord*

Dear
Parishioners,
If you have
family members
or relatives that
you wish to have spiritual support, our
Pastor Arch. Fr. Yeghia Kervanjan is ready
to fulfill your wish and visit them, when and
where is needed. Please feel free to contact
Der Yeghia directly at (514) 241-9347
or call the secretariat of the Church at (514)
279-3066



ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱԻԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրհներք փափաքող
հաւատացեալները
կրնան հեռաձայնել **Տ.
Եղիա Ա. Քհնյ.
Քերվանճեանին`
(514) 241-9347 կամ
Եկեղեցւոյ գրասենեակ`
(514) 279-3066**



The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia
at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



Աստուածաշունչի Սերտողութիւն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկե՛ք միացեք մեզի ամեն
Յինգզաբթի երեկոյեան ժամը
7:00-ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական
Աստուածաշունչի նիւթերուն
Եւ ընկերային միջավայրին:

Աստուածաշունչի սերտողութեան
խումբը՝ ընկերային ջերմ
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Բնկ.
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն
պատրաստած
Աստուածաշնչական նիւթերու
հետաքրքրական ճոխ
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Pastor and Parish Council



Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներ

Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գմման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 17th, 2017

Annual Bazaar – Saturday & Sunday-

October 28 & 29, 2017

Children's Christmas /CFFA –

Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary –

Sunday, December 10th, 2017




ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ
ԿԻՐԱԿԻ, 26 Նոյեմբեր 2017
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵԼՈՅԹ

Մանրամասնութիւնները յաջորդիւ
Հաճեցէք չխաչաձեւել

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 27 Օգոստոս 2017

**Յաւարտ Ս. Պատարագի Յատուկ Հոգեհանգստեան Պաշտօն
պիտի կատարուի՝
Ի Յիշատակ
Նորոգ Հանգուցեալ
Վաստակաշատ՝
ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ՇԱՔԱՐԵԱՆԻ
Հոգւոյն ի հանգիստ**



**Տ. ԵԼ ՏԻԿ. Ղազար ԵԼ Յասմիկ ՄԷթի ԵԼ զաւակներուն,,
Տ. ԵԼ ՏԻԿ. Տիգրան ԵԼ Ռիմա ՏԵրտերեանի ԵԼ զաւակներուն,
ՍԻԿ. Մայրանոյշ Օգօղլուի,
Տ. ԵԼ ՏԻԿ. Անդրանիկ ԵԼ Արմինէ Շիրինեանի ԵԼ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, մեծ մեծ մօր ԵԼ հարազատին՝**

**ԵՂԻՍԱՔԷԹ ՕԶՕՂԼՈՒԻ
(YEGHISAPET OZOGLU)**

Մահուան 40-ին առիթով
(սուրճի սպասարկուլթին «Մարի Մանուկեան» սրահին մէջ)



Տիկ. Էմմա Գալուստեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն՝

ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

(DN. ONNIK KALOUSTIAN)

Մահուան 4-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

**ԳԱԼԱՅԾԵԱՆ, ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, ՏՐԴԱՏԵԱՆ,
ՊԱՐՈՆԻՔ, ԿԵՕՆՃԵԱՆ
ԵՒ ԳԱԼՓԱՔԾԵԱՆ**

**(KALAYDJIAN, KALOUSTIAN, DERTADIAN, BARONIK,
GUNDJIAN & KALPAKDJIAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



ՆՈՒԲՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

***Donations of August 2017
have been received with great appreciation***

GENERAL CHURCH:

Mr. Manvel Markosyan \$40.

“KOMITAS” TBRATZ TAS

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$150.

**IN MEMORY OF THE LATE
RAFFI SOUVALIAN**

ELEVATOR FUND:

*Mrs. Sona Souvalian \$250, Dr. Lucy Tovmasian \$150,
Mr. & Mrs. Socrate & Maral Boyajian, Mr. & Mrs. Zareh & Maria Boyajian,
Mr. & Mrs. Raffi Suvalian, Mr. & Mrs. Thomas & Mania Tovmasian,
Mr. & Mrs. Avedis Jebejian \$50.*

HOKEHANKISD:

THE LATE RAFFI SOUVALIAN

*Mr. & Mrs. Levon Yaghjian \$50, Mr. & Mrs. Jirayr & Anahid Dolar,
Mr. & Mrs. Sako & Marguerite Kazarian \$20.*

THE LATE BARUYR & KRIKOR ORTAINCEYAN

Mrs. Mannik Ortainceyan \$200.

THE LATE ROZA VARTOUHI DORAMAJIAN

***Mr. & Mrs. Nerses & Rachel Doramajian,
Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$100,
Mr. & Mrs. Koko & Anahid Doghramadjian \$50.***

THE LATE NOUBAR DORAMAJIAN

***Mrs. Anahis Doghramadjian \$100,
Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$30.***

THE LATE MINAS KARAKOUZIAN

Mr. Khatchik Karakouzian \$40.

THE LATE VARTAN KASSARDJIAN

Mr. & Mrs. Kevork Keushgerian \$30, Mr. & Mrs. Raffi Keushgerian \$20.

***IN LIEU OF FLOWERS, THE FOLLOWING
DONATIONS WERE RECEIVED FOR:***

THE LATE TOROSS TOROSSIAN

***Mr. Habib Raoub, Mr. Terenik Saiyan,
Mrs. Anjel Saliby & Mr. George Saliby \$50,
Mrs. Yevkine Missak Chano \$40.***



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅ

Kef Night

Շաբաթ, 30 Սեպտեմբեր 2017,
երեկ. ժամը 8:00-ին - «Մարի Մանուկեան» սրահին մեջ

Saturday, September 30th, 2017
at 8:00 pm - In the «Mary Manoogian» Hall



Հանրածանօթ Երգիչ
Րաֆֆի
Նորշահեան
Music by special guest
Raffi
Norshahian

Ճոխ Երաժշտութիւն • Պար • Ճաշկերոյթ

Րաֆֆին ելոյթ կ'ունենայ այլազան լեզուներով
(Հայերէն, Անգլերէն, Տրանսերէն, Իտալերէն)

Հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի «Կոմիտաս Երգչախումբին»
Proceeds will benefit the «Gomidas Choir»

Մանրամասնութեան եւ տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 կամ Ատրիսէ Աղազարեանին՝ (514) 269-6575

For information and reservations, please call
the Church office at: (514) 279-3066 or Adrine Aghazarian : (514) 269-6575

Անդամներու - \$35 - Members • Ոչ-Անդամներու - \$40 - Non-Members



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպություն՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱՁԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Սօնա Տէմիրճեան

Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Հոկտեմբեր 2017
ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին



ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան
Հանդիպումները

Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241-9347

Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Հոգեւոր Հովիւ

Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Զինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հաատացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.